

**«Հ սփյուռքի նախարարության 2011թ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված ծախսերի վերաբերյալ»**

«ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

**1.«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով>>** (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսված 164268.40 հազ. դրամից ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1748-Ն որոշմամբ կատարվել է 4469.40 հազ. դրամի և վերադասի կողմից 4344.70 հազ. դրամի չափով վերաբաշխում և ճշտված պլանը կազմել է 159923.70 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 155999.89 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 153806.12 հազ. դրամ: Ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 2193.77 հազ. դրամը տարեվեջին վերադարձվել է պետական բյուջե: Ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կատարվել է 96.17 %-ով: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 6117.58 հազ. դրամը, գնման մրցույթների և առանձին ծախսային հոդվածների գծով ձեռնարկված միջոցառումների արդյունքում առաջացած տնտեսումն է: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 133371.52 հազ. դրամ, 2011 թվականի դրամարկղային ծախսը 2010 թվականի համեմատ աճել է 20434.60 հազ. դրամով կամ 15.32 %-ով, որը պայմանավորված է 2011 թվականին նախարարության աշխատակազմի պահպանման համար անհրաժեշտ ծախսերի կատարմամբ՝ մասնավորապես. ձեռք են բերվել արտոնագրված համակարգչային ծրագրեր, անհրաժեշտությունից ելնելով ավելացել են ծառայողական գործուղումների քանակը, ավելացել է քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդից ծախսը և այլն: